

Համպէթի Պալատ
Հանուն

Ձատիկ, 1969

Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպս. Տէրութեամբ
Պատրիարք Հայ Երուսաղէմի
Երուսաղէմ.

Ձերդ Ամենապատուութիւն,
Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս.

«ՁՅԻսուս Խնդրէ՛ք զՆազովրեցի զխաչելեալն.
յարեաւ՝ չէ՛ աստ» (Մարկ. ԺԶ 6):

Հրճուալի այս բառերը առաջին անգամ արտասանուեցան համեստ կի-
նքու, որոնք «ընդ առաւօտս միաշարաբան» եկած էին օծելու մարմինը Յի-
սուսի՝ որուն խաչուիլը տեսեր էին: Նայն բառերով է որ, Սիրեցեալ եղբայր,
կ'ողջունենք Ձեզ Իր Յարութեան այս տօնին:

Յիսուս Նազովրեցի կը շարունակէ խաչուիլ մեղաւոր մարդոց մույ-
արարքներով: Այլ ամէն երկրի մէջ, հաւատացեալներու սրտերէն մնչո տա-
կաւին կը բոցավառի յոյսի կրակը, եւ իր հետեւորդները զինք կը փնտռեն.
«Մեք ալն ունեւաք քէ մա է՝ որ փրկելոցն իցէ զԻսրայէլ» (Ղուկ. ԻԴ 21):

Իրենց հաւատքին մէջ, իրենց փնտռութիւնը կը վարձատրուի եւ կը լսեն
աւետիսը երեշտակներուն. «Ամ յարութիւն առած է»։ Ու տակաւին, անոնք
կը լսեն Տիրոջ ողջոյնը՝ իր առաջին հետեւորդներուն. «Ողջոյն ընդ ձեզ. որ-
պէս առաքեաց զեւ Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ» (Յովհ. Ի 21):

Այս է շարունակուող առաքելութիւնը աշխարհի մէջ ամէն անոց՝
որոնք կը հաւատան Քրիստոսի Յարութեան եւ Անոր գորութեան՝ հալածելու.
խաւարի արարքները: Այս ապահովութեամբ է մահւ որ կ'ողջունենք Ձեզ,
Սիրելի եղբայր, եւ կ'ազօքենք որ Աստուած Ձերդ Ամենապատուութիւնն ու
Ձեր Եկեղեցիի բոլոր հաւատացեալները օրհնէ, եւ մեզ բոլորս դարձնէ զոր-
ծիւքները իր սիրոյն եւ խաղաղութեան:

Եղբայրական սիրով,

Անկեղծօրէն Ձերդ ի Քրիստոս

ՄԻՔԱՅԷԼ

Արքեպիսկոպոս Գէմբրուրքիի
եւ Առաջնորդ Համայն Անգլիոյ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Զատկական տոնին առիթով, հետևեալ հեղագիրները փոխանակուած են.

2 Ապրիլ 1969

2 Ապրիլ 1969

Ն. Ս. Օծուքիւն

Տ. Տ. Վազգէն Առաքին

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին.

Գերաշնորհ

Արքեպիսկոպոսին Քէմբրիպրիի

և Առաջնորդին համայն Անգլիայ,

Լամպէթի Պալատ.

Տեսան Մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան Տօնին առիթով, Մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներուն և համայնքին ամուսնով Ձերդ Ս. Օծուքեան կը ներկայացնեմք ամենէն անկեղծ շնորհաւորութիւնները ցանկալով քաջառողջութիւն և երջանկութիւն, ինչպէս նաեւ քարգուսնած օրեր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Տեսան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, հաճեցէ՛ք ընդունիլ Մեր անկեղծ շնորհաւորութիւնները: Ձերդ Սրբազնութեան և Անգլիայ Ժողովարդին կը բարեմաղթեմք երջանիկ Զատիկ և քարգուսնած օրեր:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

2 Ապրիլ 1969

Ն. Սրբութիւն

Պօղոս Զ.

Վատիկան.

Ն. Ամենապատուութիւն

Տ. Նդիշէ Արքեպ. Տէրաւրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ.

Տեսան Մերոյ Յիսուսի Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, Ձերդ Սրբութեան կը ներկայացնեմք շնորհաւորութիւններ, մաղթելով շարունակական քաջառողջութիւն, երջանիկ տարիներ և Ձեր ծրագիրներուն իրականացում:

Շնորհակալութեամբ ստացած ըլլալով Ձեր շնորհաւորութիւնները, գամեմք սրտովին կը փոխադարձեմ՝ Հայկական տօններուն առիթով:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՏԳԹ. ՎԱՐՀԱՅԹԻԿ

Կրօնից Նախարար